# Տ. ԶԱՎԵՆ ԱԲԵՂԱ ՅԱԶԻՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(8 հունվար 2012 թ.)

Քրիստոս Ծնավ եւ Յայտնեցաւ,
Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս:

«Մինչդեռ ժամանակս ի ձեռն է, գործեսցուք զբարիս առ ամենեսեան»
«Մինչդեռ ժամանակ ունենք, բարիք գործենք ամենքին»
**(Գաղ. Զ. 10)**:

Սիրելի եւ բարեպաշտ հավատացյալ, անցնող մի քանի օերին բովանդակ մարդկությունը պարուրված էր անհուն սիրով եւ ուրախությամբ: Ամեն մարդ, առանց սեռի ու տարիքի խտրության, առանց մաշկի գույնի եւ կարգավիճակի տարբերության, տոնական այս օրերին յուրօրինակ մի զգացում ապրեց՝ նորի սպասման զգացումը: Իսկ մենք Արեւելքում բնակվող քրիստոնյաներս դարձյալ եւ կրկին ուրախ սրտով, ազնվագույն զգացումներով եւ անկեղծ հավատքով 2012-րդ անգամ սրբազան եւ սրբարար բառերով ողջունեցինք մեկմեկու՝ մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի ծննդյան եւ Աստվածհայտնության ավետիսը փոխանցելով իրար:

Վերստին Ծննդյան եւ Աստվածհայտնության այս անմար լույսի ներքո նորոգյալ սրտով եւ հոգով, կյանքին կյանքով նայելու, վճռական ու արի կեցվածքով, քրիստոսատիպ մեր կյանքի նավարկությունը շարունակելով դեպի խաղաղության նավահանգիստ՝ փառք եւ գոհություն ենք վերառաքում առ Մանուկ Փրկիչը, որ այս տարի եւս կամքն Ամենակարողն Աստծու արժանի դարձանք միասնաբար եւ միաբան տեսնելու, մասնակցելու, աղոթելու եւ հաղորդակիցը դառնալու Փրկչի Սուրբ Ծննդյանը:

Մեր Տիրոջ ծնունդն ավետող բառերը՝ Քրիստոս Ծնավ եւ Յայտնեցաւ, քայլեցին մարդկության պատմության տարազան ուղիներով, անցան երկրե երկիր, արձագանքեցին մարդկանց սրտերում, տեսակ տեսակ լեզուների տարազներ հագան, սակայն փոշի չտեսան՝ միշտ մնացին նոր, նորօրյա ու թարմ: Ընդհակառակը, փոշուց սրբեցին փոշոտված մտածողությունը, ստվերներ փարատեցին մթագնյալ սրտերից, կյանքին նոր եռանդ տվեցին, նոր ուղի բացեցին բոլոր նրանց համար, որոնց սրտերում կասկածն ու վախը, անորոշությունն ու նախանձը խռովք ու շփոթ էին ստեղծել, ոմանց համար բալասան եղան այս բառերը, ուրիշների համար՝ ապրակ:

Սիրելի հավատացյալներ, աշխարհը փոխվում է, ժամանակը կանգ չի առնում. մշտագնաց ու հորձանուտ գետի պես ընթացող այս կյանքում, արդի գործելակերպի, մեքենայական ապրելակերպի արագ ընթացքի մեջ, մարդ հաճախ չի անդրադառնում թե ինչպես է տարին իր մայրամուտին հասնում: Այսպիսի ընթացքը նոր չէ մարդկությանս մեջ, այս փոփոխման

մեջ մենք բոլորս մեր մասն ու բաժինն ունենք, ուստի ամեն մեկս պիտի գիտակցենք եւ ջանանք ապրել ներգործական կյանքով, ամեն մի պատեհ առիթ փորձենք լավագույնս օգտագործել բարին գործելու մեր նմանի հանդեպ՝ վասն առավել լույսի եւ ի խնդիր ճշմարիտ երջանկության:

«Մինչդեռ ժամանակ ունենք, բարիք գործենք ամենքին»,- ասում է առաքյալը: Հին հունական մի պատմության մեջ Պատեհությունը, իբրեւ առարկայացված կերպար հետեւյալ տեսքն ուներ. հրեշտակի թեւերով, կանգնած ոտքերի ծայրերի վրա, առջեւից մազերը երկար, ետեւից ճաղատ: Երբ մարդիկ հարցնում են քանդակագործին թե ինչու ես այդպես քանդակել, նա պատասխանում է, ոտքերի ծայրերին է, որովհետեւ պատրաստվում է թռչել, առջեւից մազերը երկար են, որպեսզի թռիչքի պահին մարդիկ կարողանան բռնել նրան, իսկ ետեւից ճաղատ է, որովհետեւ եթե նա գնաց այլեւս անհնար լինի նրան բռնելը:

Սիրելիներ, պատեհության այսպիսի ընկալումն արդիական է նաեւ մեր օրերում, մեր իրականության մեջ: Ցավոք տեսնում ես մարդկանց, որոնք այս երկնապարգեւ բարիքի կարեւորությունը չեն զգում եւ չեն գնահատում: Իմաստությունն ասում է. «ժամացույցի սլաքին անդադար նայող մարդու համար ժամանակը մեռած է, իսկ աշխատող մարդու համար ժամանակն արագ է սլանում»:

«Մինչդեռ ժամանակ ունենք, բարիք գործենք ամենքին»: Անշուշտ եւ բնականաբար այն ինչ ճշմարիտ է անհատին, ճշմարիտ է նաեւ ազգի՝ հավաքականության համար: Բարին գործելու մղումը սերում է այն ըմբռնումից, երբ մարդ հասկանում է հավաքականության մաս կազմող լինելու խորախորհուրդ իմաստը: Այսպես լուրջ եւ պատասխանատվության գերագույն զգացումով պետք է ժամանակն իր թանկագին պատեհություններով օգտագործել բարին գործելու համար: Թող սա չլինի սոսկ Նոր տարվան եւ Սուրբ Ծննդյան առիթներով կատարվելիք պարտականություն, քանզի ինքներս շատ լավ գիտենք, որ կենցաղային ու վաճառականացված իրականությունը չէ այս տոների խորհուրդը, Մեր Տիրոջ՝ Փրկչի Սուրբ Ծնունդը ոչ միայն սքանչելի եւ մեծ խորհուրդ է, այլեւ իրակնություն է մեզ համար:

Կայնքի այսօրինակ ընթացքով ապրող մարդու համար փորձանքն ու տառապանքը կարծես դառնում են դրական, երբ չեն կարողանում ընկճել մարդ անհատին, դարձնում են նրան ավելի ինքնագիտակից, ինքնուշադիր եւ ինքնատես: Նման տագնապները հաճախ անցյալում գործած սխալներին անդրադառնալու առիթ են դառնում, այդ սխալները չկրկնելու վճռականություն են թրծում մեր մեջ:

Ուստի, բարեպաշտ եւ սիրելի հավատացյալներ, գնահատենք նորածագ տարվա մեջ ամեն մի վարկյան՝ օրերն օգտագործելով որքան մեր անձնական, նույնքան էլ մեր դիմացինի հաջողությունների, ուրախության, երջանկության համար: Քանի դեռ Ամենակարող Աստված մեզ պահում է այս կյանքում, օգտագործենք ժամանակը բարիք գործելով՝ ի զորացում մեր Հայրենիքի եւ ի պայծառություն մեր Մայր Եկեղեցու: Երբեք չհուսահատվենք, որ ժամանակն իր դարավոր պատմության մեջ արցունք ու ավեր է բերել մեր Ազգին: Իբրեւ ճշմարիտ քրիստոնյաներ մեր մտքում թող միշտ թեւածի այն արվեստագետի պատկերը, ով միշտ ինչ-որ բան ավելացնում եւ սրբագրում է իր ստեղծագործության մեջ՝ ցանկանալով այն դարձնել անթերի ու կատարյալ:

Քրիստոսի սիրո վարդապետությունը պիտի արտացոլվի ամենօրյա մեր կյանքից ներս,

մեր գործերի մեջ եւ դառնա հիմքը մարդկային փոխհարաբերությունների, որպեսզի մարդը չհեռանա իր Արարչից եւ շարունակի մնալ Աստվածային պատկերն ու նմանությունը կրողը: Քրիստոս Աստվածորդին իր Ծնունդով մարդուն առաջնորդում է դեպի նոր կյանք. այս կյանքի հոգեւոր ճարտարապետը մենք ենք, մեզ մնում է լցնել այդ կյանքը մեր բարի գործերով եւ առաքինասեր վարքով:

Բեթղեհեմյան անմար Լույսը թող հավետ վառվի մեր սրտերում, քանզի լույսն է գոյության հայտնիչը եւ Աստվածային ձեռագործի մատուցողը մարդկությանը, ուստի վառ պահենք այդ լույսը մեր սրտերում. ճիգն ունայն է, եթե այն հարատեւ չլինի:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,
Ձեզ եւ Մեզ Մեծ Աւետիս:
Ամէն: